



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

## Ա. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻՆ ՈՐՊԵՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՄՈՒՏ ԲԱՐԵԿԱՐԳԻԶ ԵՎ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԵՐԱԺԻՇՏ- ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ\*

ԺԱ. դարում Արևելյան Հայաստանում հայ պետականության վերացումով և «ի լանկմանն ազգիս հայոց» այնտեղ տիրող տնտեսական ու քաղաքական ծանր պայմանների հետևանքով անշքացել էին մեր հոգևոր-կրթական օջախներն ու վանքերը, խաթարվել ու վերացել հայ եկեղեցու դարավոր ժամասացության կարգն ու եկեղեցական-ծիսական պաշտոններգությունը. «Իշխանությունն մեր բարձրեալ... եկեղեցին մեր խրթնացեալ, աշխարհս մեր յազգաց օտարաց աւերեալ... ամենեքեան ցրտացեալ առ սէր աստուածայնոցն»<sup>1</sup>:

Սահակ-Մեսրոպյան ծիսական կարգ ու կանոնի վերացումը այնքան ծանր էր ճնշում, որ «ոչ ոք էր որ խնդրէր յայնպիսոյն աստուածամուխ առնել զճառս իմաստից կամ զմեկնությունս խորին խորհրդոց»<sup>2</sup>:

Վանքերում և եկեղեցիներում լռել էր մեր հոգևոր երգը: Ընդհանրապես ահա այս տխուր իրադրությունում ձգտել է վերականգնել ու է՛լ ավելի հարստացնել մեր հոգևոր, ազգային դարավոր ժամապաշտության և եկեղեցական երգարվեստի լավագույն ավանդությունները. «Ժարարէր բանս աղօթականս նորս արուեստի և լնոյր ի նմա զմիտս և զգօրությունս հնոյն և նորոյն... առ ի յօգուտ մնալոյ ազգիս մերոյ, յիշատակ բարեաց յապագայսն զկնի թողլով»<sup>3</sup>:

Ընդհանրապես ի մասնավոր իր եպիսկոպոսության շրջանում, ստեղծագործական իր ուժերի ծաղկման և հասունության ժամանակահատվածում, 1135—1165 թվականներին, իր կաթողիկոս եղբոր հանձնարարությամբ և ցանկությամբ «ընկալեալ զհրամանս և զաղաչանս սկսանէր երգել զերգս հոգևոր պաշտամանց, զոր պակաս և թերի գտանէր»:

«Նկատելով որ շատ ու շատ են Ներսեսի գրիչեն եկեղեցական պաշտամանց հավելվածները, և շատ երկար չեն իրեն կաթողիկոսության տարիները, անհավանական են թաղարություն չենք համարի, որ անոց մի մասը նույնիսկ իր եղբոր կաթողիկոսության միջոցին պաշտոնապես կիրառության մուծած ըլլան եկեղեցիներում մեջ և հետզհետե տարածված» (Օրմանյան, «Ազգապատում, 1959, Բեյրութ, Ա, էջ 1402):

Ընդհանրապես մեր «հասարակաց աղօթքի կարգը» կամ ժամերգությունը բարեկարգելու և նրան միաձևություն տալու նպատակով բուն Հայաստանի հին ու պատմական վանքերից, մանավանդ Թեղեկաց և Մաքենոցաց «հոշակավոր և աստվածաբնակ» վանքերից բերել է տալիս եկեղեցական պաշտամունքի կարգ ու կանոնի մասին մեր «հրեշտակակրօնս ու հարց» վանական կանոնադրություններ և ինքը սահմանում է գիշերային, առավոտյան, արևագալի, ճաշու, երեկոյան և խաղաղական ժամերի և ս. պատարագի խրատները. «Զպակասն ելից, զսխալն ուղղեաց և կարգեաց սմեմայն հայց. եկեղեցույ անջրելի և հաստատուն աւանդ...»:

Ընդհանրապես այս առթիվ է, որ շարադրում

\* Ժամանակություն «Էջմիածին» ամսագիր, 1973, №№ 6 և 9:

<sup>1</sup> «Մոփեթ հայկական», Վենետիկ, 1854, ԺԴ, էջ 41:

<sup>2</sup> Անդ, էջ 41:

<sup>3</sup> Անդ, էջ 41:



է իր «Ժամատեղեաց խրատք»-ը, որը ծանոթ է նաև «Կարգաորոշիւնք եկեղեցւոյ և արարողութիւն ժամատեղեաց տեսուն Ներսիսի հայոց կաթողիկոսի» անունով<sup>4</sup>:

Ընորհալին հանգամանորեն զբաւլում է մեր եկեղեցական կարգ ու կանոնի, պաշտամունքային, ծիսապաշտական երգ-երածրշտության կարգաւորության և հարըստացման հարցերով, հարցեր, որոնց լուծման անվիճելի ձեռնհասությունն ու բնածին կարողությունն ունեն:

«Իսկ սուրբ Հայրապետն Գրիգորիս, յորժամ տեսանէր յայսպիսի անճառելի շնորհս և զիմաստութիւնն՝ աղբերաբար յառաջ եկեալ յեղբօրէն ի սրբոյն Ներսիսէ, խնդրէր հարազատաբար հոգևոր սիրով ի նմանէ արծարծել այնուհետև զաստուածային շնորհքս և լցուցանել զթերին ի կարգս եկեղեցւոյ՝ ի յիշատակ իրեանց ի սուրբ եկեղեցի, ապագայիցն թողլով: Որոյ ընկալեալ զհրամանս և զսուրբազան աստուածայնոյ Հայրապետին, սկսանէր երգել զերգս հոգևոր պաշտամանց, զոր պակաս և թերի գտանէր և սուրբ ձեռնին գրով աւանդէր մանկանց եկեղեցւոյ՝ որք ժողովեալ լինէին առ նոսա յաւենայն գաւառաց ի սպասաւորութիւն սրբոյ Աթոռոյն, արք իմաստունք և շնորհազգեացք, յեպիսկոպոսաց և վարդապետաց, քահանայից և ի սարկաւազաց: Զի ո՛չ ինչ էր նոցա ըստ այնմ ժամանակի սիրելի, բայց եթէ ընտրելոց արանց և առաքինեաց ժողով:»

Ընորհալու բարեկարգչական ջանքերով «հարսնացեալ եկեղեցի Հայաստանեայց պայծառապէս զարդարմամբ շքեղանանայր, հալածեալ ի նմանէ աղջամղջին խաւար թանձրամած ի յանկմանէ ազգիս և ի ծովագոյն հովուաց ի ներքս մտեալ և լուսաւոր կարգ եկեղեցւոյ ի սուրբ լուսաւորչացն հաստեալ՝ յանիշխանութենէ ազգիս մերոյ բարձեալ, և խաւարաւ մոռացութեանն նսեմացեալ խրթնատեսակ անգարդութեամբ...»:

Ընորհալին, այսպիսով, «նորոգէր գառաջին սուրբ հարցն հաստատեալ կարգս եկեղեցւոյ և զարդարէր զեկեղեցիս Հայաստանեայց, անթերի լրմամբ»<sup>5</sup>:

Ընորհալին հոգ էր տանում նաև եկեղեցւոյ արտաքին «պայծառ, առոյգ, վայելուչ» կառուցվածքին ու սպասների բարեգործությանը. «Զարդարէր զեկեղեցիսն ոսկեղէն և արծաթեղէն անօթիք, և պայծառագոյն ոսկեակար զգեստուք, բաշխման ւուրբ

մարմնոյ և արեանն Տեառն, և յորդորէր զամենեսեան՝ իմանալի և զգալի պայծառութեամբ սպասաւորել կենարար և երկըրպագելի սուրբ խորհրդոյն»:

Ընորհալու օրով հայկական կիլիկիան մեծագույն ջանքեր էր ի գործ դնում՝ յուրացնելու և վերականգնելու հայ եկեղեցական հին մշակույթի, հոգևոր ավանդությունների և բուն Հայաստանի գիտության, կրթության և արվեստի նվաճումները:

Այս իմաստով կիլիկիայում Կարմիր վանքը, Ծովքը, Հոռմկլան, որոնք կապված էին Ընորհալու ատեղծագործությանը, դարձան հայ եկեղեցական մշակույթի կիլիկյան շրջանի առաջին և հիմնական օջախները, ուր հաստատվել էր Հայրապետական Աթոռը հաջորդաբար և ուր բացվել էին վանական, հոգևոր տիպի բարձրագույն դպրոցներ:

Ծովքում և ապա Հոռմկլայում էր, որ դարձյալ Ընորհալին գրեց իր հոգեւոր շարականները, տաղերն ու մեղեդիները, գանձերն ու երգերը և հարստացրեց մեր հոգևոր բանաստեղծության գանձարանները՝ Ծարակնցը, Ժամագիրքը, անկրկնելի արժեքներով:

Միջնադարյան շարականագրության և հայ երգարվեստի զարգացման պատմության մեջ Ընորհալին կատարեց նույնպես պատմական ու վճռական դեր, որպէս եկեղեցական ծիսապաշտության վերանորոգիչ: «Եկեղեցական պաշտամանց իսկական բարեկարգիչ մըն է Ընորհալին, ինչպէս եղած էին անցյալ դարերուն մեծ Սահակ Պարթև, Հովհաննէս Մանդակունի և Հովհան Օճնեցի Հայրապետները»<sup>6</sup>:

Ընորհալու ջանքերով «ընդհանուր եկեղեցիք Հայաստանեայց ի ժամանակս ս. Հայրապետին Ներսիսի լուսաւորեալք ի շնորհաց նորա և ի ուրախացեալք ի վերայ աստուածագոյն հովվապետութեանն նորա՝ ընդ ամենայն տեղիս, գոհանային զՏեառնէ և զգալի պայծառութեամբ սպասաւորել կենարար և երկրպագելի սուրբ խորհրդոյն»:

Ընորհալու «անունին ավելի հոչակ տվող գրական աշխատությունները՝ ժամերգությանց և եկեղեցական պաշտամանց համար գրածներն ու կարգադրություններն են: Ժամագիրքին մեջ ինչչափ երգեր կան, ամենն ալ Ընորհալինն գրածներն են: Ծարականներուն մեջ ընդարձակ ցուցակ մը կկազմեն իրեն վերագրվածները (Տաթևացի, 637), թող մեղեդիները, տաղերը, գանձերը, որոց ոչ միայն խոսքերն է գրած, այլ և եղանակները ներդաշնակած, հավասարապես հմուտ ըլլալով թե՛ քերթողական և թե՛ երա-

<sup>4</sup> Է. Վ. Հացունի, «Պատմություն հայոց Աղօթամատյցին», Լենինոյի, 1965, էջ 380—393:

<sup>5</sup> «Սուրբեր հայկականք», էջ 36—37:

<sup>6</sup> Մաղ. արքեպ. Օրմանյան, «Ազգապատմութիւն», Ա. հտ., Բելրուր, 1959, էջ 1440:



ծըշտական արվեստներում: Անհնարին է որ նշտական ձայնովն ալ երգեցողության հարմար և քաղցրանվագ եղած չըլլա»: (Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 1439):

«Շնորհալին է հեղինակ վերջին կարգավորության մեր ամենայն եկեղեցական պաշտամանց, որոնց համար նախ հաստատել էր ան Տոնից գիրքն կամ Տոնացույցն»<sup>7</sup>:

Շնորհալին որպես երաժիշտ և շարականագիր թողել է բազմաթիվ երաժշտական ժառանգություն:

Անկարելի է պատկերացնել մեր շարականների գանձարանը առանց Շնորհալու:

Նա գրել է տերմոնական, պահոց օրերի, սրբերին նվիրված, դավանաբանական, վարքագրական, հայրենասիրական բովանդակությամբ բազում շարականներ, տաղեր, զանգեր, մեղեդիներ<sup>8</sup>:

Շնորհալու երաժշտական, շարականագրական և եկեղեցական բարենարգչական գործունեության մասին առաջինը խոսել է նրա ժամանակակից և ձեռնասուն Ներսես Լամբրոնացին.

«Խոհեմական մտքը հայի,  
Թե՛ ի՞նչ սահման կարգաց թերի,  
Արագապես ուղղիչ լինի  
Ածեալ ի կիրթ արուեստ բանի...  
Ներսես տօնիցըն զարդարիչ  
Եկեղեցույ կարգաց գտիչ,  
Տերմոնական աուրց պատմիչ,  
Ըստ խորհրդեանն երգս յօրինիչ»<sup>9</sup>:

«Շնորհալին ոչ միայն երգահան է եղել, այլև երաժիշտ, բառիս լայն իմաստով: Այն է՝ երգիչ, ուսուցիչ, տեսաբան, գեղագետ և մանավանդ մեծ բարեկորդ: Բարեկորդիչ թե՛ իր բուն ստեղծագործությամբ և թե՛ պաշտոնագործության ծիսական կողմի բարեկարգությանը ուղղված հասարակական գործունեությամբ»<sup>10</sup>:

Այս մասին դարձյալ Լամբրոնացին է, որ վկայում է.

<sup>7</sup> Հ. Ղ. Ալիշան, «Շնորհալի և պարագայ իր», Վենետիկ, 1873, էջ 443:

<sup>8</sup> Գր. Հակոբյան, «Ներսես Շնորհալի», Երևան, 1964, էջ 95—120:

<sup>9</sup> Ներսես Լամբրոնացի, Գովեստ ներքողական... լաղազս վարուց մեծի Հայրապետին, տեսան Ներսիսի... «Թուղթ ընդհանրական», ի ս. Էջմիածին, 1865, էջ 469, 482:

<sup>10</sup> Նիկողոս Կ. Թահմիզյան, «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ», Երևան, 1973, էջ 4 (նույն գիրք, մամուլի տակ է):

«Յօժարական կամօք երգէր,  
Եւ աննախանձ ուսուցանէր.  
Շարականաց կարգ անցնէր,  
Տաղերգութիւնս ի ճախ առնէր,  
Քաղցր ձայնիւք անջրպետէր,  
Որ երաժիշտ՝ սուրբ Հոգւոյն էր»<sup>11</sup>:

Շնորհալին որպես հայ եկեղեցու լուսամիտ հայրապետ և մեծ բարեկարգիչ, երաժշտական դաստիարակությունը պարտադիր և անհրաժեշտ է համարել հոգևորականի համար. «Չմանք ուսմունս ձայնատրացն պաշտել յեկեղեցիս և ապա գալ ի ձեռնադրութիւն քահանայութեան»<sup>12</sup>:

Ներսես Լամբրոնացին վկայում է, որ Շնորհալին գրել է շարականներ, նվիրված մարտիրոսների, ճգնալիւրների և հայրապետների հիշատակին:

Շնորհալին հանդիսացել է

«Մարտիրոսացն մեծարիչ,

Ճգնաւորաց փառաբանիչ,

Հայրապետաց վարուց պատմիչ»<sup>13</sup>:

Ժ. Գ. դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին նույնպես գրում է Շնորհալու բարեկորդչական գործունեության և նրա երաժշտական-շարականագրական վաստակի մասին.

«Եւ զի էր սա (Շնորհալին) աշտ բանաւոր, բազում ինչ կարգեաց յեկեղեցիս, քաղցր եղանակաւ, խորովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս, ոտանաւորս»<sup>14</sup>:

Գանձակեցին իր պատմության մեջ նշել է նաև, թե Շնորհալին ո՞ր կանոնի ո՞ր շարականներն է գրել: Գանձակեցին տվել է Շնորհալու գրած շարականների ոչ լրիվ ցանկը.

«...քանզի նորա է յարութեան օրհնութիւն՝ երրորդ կողմն, և Աստուածածնի փոխման երկուց աւուրցն, և Պետրոսի և Պօղոսի օրհնութիւնն, և մանկունքն, և համբարձին, որոյ սկիզբն է այս. «Յճա՛ աշտօր եկեղեցի Աստուծոյ յիշատակաւ սուրբ առաքելոցն», և Որդուցն Որոտման օրհնութիւն՝ «Որ էնն էութեան որդի միշտ էր» և շարական մի Անտոնի, և երկու Թեոդոսի և մի քառասնիցն, և մի առաքելոցն, և առաջ շարթին երից աւուրց օրհնութիւն-երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին. և երկու շարական յարութեան ճաշոց. և Նիկուէացոցն, և հրեշտակապետացն, և սրբոց Վարդանանցն» (էջ 119):

<sup>11</sup> Ներսես Լամբրոնացի, էջ 477—478:

<sup>12</sup> Ներսես Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», ի ս. Էջմիածին, 1865, էջ 78:

<sup>13</sup> Ներսես Լամբրոնացի, էջ 469:

<sup>14</sup> Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Երևան, 1961, էջ 119:



Այնուհետև Գանձակեցին ընդհանուր ձեվով նշում է, որ վերոհիշյալ շարականներից բացի Շնորհալին գրել է նաև «այլ բազում շարական»:

ԺԻ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը նույնպես նշում է, որ Շնորհալին «բաժանեաց և գութն ձայնն և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնս»<sup>15</sup>:

Շնորհալու երաժշտական-շարականագրական հարուստ և բազմաժանր վաստակի մասին խոսել են նաև հետագա դարերի մեր պատմիչներն ու երաժիշտները, այդ թվում՝ Սարգիս երեցը, Գրիգոր Տաթևացին, Ստեփանոս Զիգ ջուղայեցին, Հակոբ Ստեցին և ուրիշներ, որոնք նույնպես տվել են Շնորհալու գրած և նրան վերագրված շարականների, հոգևոր երգերի, տաղերի ոչ լիով ու ճշգրիտ ցանկը:

Շնորհալու գրած շարականների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև մեր ձեռագիր շարականները ու մանավանդ 1833 և 1877 թվականների Մայր Աթոռի տպարանից լույս տեսած Զայնքաղ շարականների հառաջաբանները<sup>16</sup>:

Մայր Աթոռի տպարանից 1888 թվականին լույս տեսած «Զայնքաղ շարական»-ի հառաջաբանում նշվում են մեր շարականագիրների անուններն ու նրանց գրած շարականները. շարականագիրներ «որք զծորանս հոգւոյն արբին և ընդ ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց»: Այդ շարականագիրների թվում է նաև մեծավաստակ Ներսես Շնորհալին, որին վերագրվում են հետևյալ շարականները.

«Սուրբն Ներսէս շնորհալի՝ զՎառ ձայնն Ասագ օրհնութեան, զԵօթանասանցն, զՆինուէացոցն, զԱղոհացից ամենայն Կիրակեիցն, զԾաղկազարդի հարցն. զՀոգոյ գալստեան չորս պատկերսն. զՎարդավառի գերկու պատկերսն, և զՓոխման գերկու պատկերսն. զՅոհաննու՝ դձ. հարցն. զՄարգարէից՝ դձ. հարցն. զՀրեշտակապետացն, զՆորահրաշն Վարդանանց, զԴևոնդեանցն, և զԱյսօր անճառն, զՆորոգօղն, զԱստուած անեղն, զԱրարչականն, զԱրևագալի շարականն, զՕրհնեմք զբեզն. զՆայեա՛ց սիրովն, զԻբէն հայցեմքն. և ըստ ոմանց՝ զսուրբ Յակոբայն ևս տորա՛ է ասացեալ»<sup>17</sup>:

Շնորհալու երաժշտական-շարականագրական արվեստի ազդեցությունը կրել են

հետագա դարերի բոլոր երաժիշտներն ու շարականագիրները:

Շնորհալու երաժշտական բազմաժանր ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել են հ. Մ. Չամչյանը, հ. Գ. Ավետիքյանը, հ. Ղ. Ալիշանը, հ. Գ. Զարպհանյանը, Մաղ. արքեպ. Օրմանյանը, Եղիշե արքեպ. Դուրյանը, Սահակ վրդ. Ամատունին, Կոմիտաս վարդապետը, Մկրտիչ Էմինը, Նիկ. Թաշճյանը, Մ. Եկմալյանը, Կարապետ Կոստանյանը, Սպ. Մելիքյանը, Մ. Աբելյանը, Ն. Տեր-Միքայելյանը, Դ. Խաչկունցը, Աշոտ Պատմագրյանը, Ռ. Աթալյանը, Գր. Հակոբյանը, Նիկ. Թահմիզյանը, որն ընդարձակ, ամբողջական և արժեքավոր մի ուսումնասիրություն է պատրաստել ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի ղեկավարության հաճմարարությամբ Շնորհալու մասին՝ նրա մահվան 800-ամյակի առթիվ՝ «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ» վերնագրով և որը շուտով կհրատարակվի Երևանի Պետհրատից: Սույն մեծագրության մեջ «լուսաբանվում է ԺԻ դարի և հայկական ողջ միջնադարի մեծագույն երգահանի ու երաժշտի՝ Ներսես Շնորհալու ստեղծագործական ուղին, բնութագրվում է նրա երաժշտական-բանաստեղծական ժառանգությունը և երաժշտա-հասարակական բեղուն գործունեությունը»<sup>18</sup>:

Սույն արժեքավոր ուսումնասիրության մեջ հեղինակը հաստատում է, որ երաժշտական արվեստի բնագավառում Շնորհալուն համեմատել են բյուզանդական երաժիշտ Ռոմանոս երգեցողի և ասորի Եփրեմ Խուրիի հետ, որ՝ «Շնորհալին իր ժամանակին միջազգային ճանաչում ու համբավ է վայելել որպես Մերձավոր Արևելքի բազմակողմանի օժտված վառ դեմքերից մեկը» և որ Շնորհալին «մի խոշոր երևույթ է համաքրիստոնեական մշակույթի պատմության մեջ»<sup>19</sup>:

Նիկ. Թահմիզյանի ուսումնասիրությունը կարևոր է նաև նրանով, որ հեղինակը ձեռագիր շարականների, պատմական-բանասիրական տպագիր նյութերի մանրակրկիտ և խոճամիտ քննությամբ և տարիների տրեճաջան աշխատանքով հաստատում է, որ «չկա հայկական միջնադարյան ծիսական-երաժշտական մի գիրք, որով զբաղված չլինի Շնորհալին: Դրանցից մի քանիսը, ինչպես օրինակ՝ Ծարակնոցը, նա վերանայել է և լրացրել հիմնովին: Այս գրքերում ցրված Շնորհալու երգերը հասնում են

<sup>15</sup> Ստեփանոս Օրբելյան, «Պատմություն մահանգից Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 138:

<sup>16</sup> «Զայնքաղ շարական», Էջմիածին, 1833, առաջաբան, էջ 3 և 1877, էջ 3:

<sup>17</sup> «Զայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 3:

<sup>18</sup> Նիկողոս Թահմիզյան, էջ I:

<sup>19</sup> Ամդ, էջ 3, 4, 30, 35:



հարյուրների: Բայց դրանցից բոլորը չէ, որ իրենց խորագրում կամ մի այլ ձևով պահպանել են հեղինակային պատկանելիությունը ցույց տվող որևէ նշում: Դրան վերաբերող միջնադարյան և արդի բանասիրական նյութերն էլ թերի են և ստուգման կարոտ: Այս պայմաններում մի առանձին ու դժվարին հարց է և ապագայի գործը՝ Շնորհալու պաշտամունքային բոլոր ստեղծագործությունների նշումած, լիակատար ցանկը կազմելը, ինչքան էլ որ դա այժմ չափազանց անհրաժեշտ լինի թե՛ հայ բանասիրության, թե՛ երաժշտագիտության համար»<sup>20</sup>:

Ինչպես տեսանք, միջնադարյան մեր հեղինակների մոտ և ձեռագիր շարականներում չկան Շնորհալու գրած շարականների, հոգևոր երգերի կանոնների մասին նշգրտված և ամբողջական ցանկեր: Շնորհալու գրած շարականների կանոնների քանակի մասին համաձայնություն չկա մաս առ մաս սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ ըզրադվող մեր մասնագետ բանասերների մոտ: Այսպես, օրինակ, ըստ Կ. Կոստանյանի, մեր այսօրվա «1812 երգեր պարունակող շարականի կեսը Շնորհալուն է վերագրվում»: Ըստ Հ. Մկրտչյանի «այսօրվան Շարակնոցին գրեթե հինգերորդ մասը Շնորհալիի գրածներն են»: Հ. Սահակ Ա. մատուցին Շնորհալուն է վերագրում Ծարակնոցի կանոնից դուրս «շուրջ հինգ տասնյակ պարականոն շարականներ ևս»: Ծարակնոցում «այժմ պահպանվում են Շնորհալու գրչին պատկանող շուրջ 200 երգեր»<sup>21</sup>:

Այս բոլորից հետո Ն. Թահմիզյանը եզրակացնում է. «Բոլոր դեպքերում ճիշտն այն է, սակայն, որ Շնորհալու շարականները, անկախ դրանց թվաքանակից (թեպետև դա էլ ինքնին մեծ է), հայ Ծարակնոցում առաջնակարգ տեղ են գրավում իրենց թեմատիկ բազմազանությամբ և երաժշտաբանաստեղծական բարձր արժանիքներով: Իրավացի է, անկասկած, Ն. Տեր-Միքայելյանը, երբ հայ Ծարակնոցի զարգացման մեջ Շնորհալու խաղացած դերը բնորոշում է որպես «դարագլուխ կազմող»<sup>22</sup>:

Ըստ Ն. Թահմիզյանի վերջին ուսումնասիրության «Ձայնագրյալ շարակնոցում» Շնորհալու գրչին պատկանող երգերի ցանկը հետևյալն է.

— Կանոն Անտոնի Անապատականի՝ օրհնություն «Որ ի հանդէս քո ճգնութեան».

— Կանոն սրբոյն Թէոդոսի թագաւորին՝ օրհն.:

— Ծարական Տրդատայ թագաւորին՝ մանկունք.

— Կանոն սրբոց Պետրոսի և Պօղոսի՝ օրհն., մնկ., համբարձի:

— Կանոն որդւոցն որոտման՝ օրհն.:

— Կանոն եօթանասուն և երկու աշակերտաց Քրիստոսի՝ օրհն. հարց., ողորմեա, տէրյերկնից:

— Կանոն Յովհաննո մարգարէին՝ հրց., մեծացուցէ, ող., տր., մնկ., հմբ.:

— Կանոն բուն Բարեկեդանիին՝ օրհն., հրց., մծ., ող., տր.:

— Սրբոյն Թէոդորոսի՝ մնկ.:

— Կանոն երկրորդ Կիրակէի աղուհացից՝ օրհն., հրց., մծ., ող., տր.:

— Սրբոյն Կիրոյի Երուսաղէմայ հայրապետին՝ մնկ.:

— Կանոն երրորդ Կիրակէի աղուհացից՝ օրհն., հրց., մծ., ող., տր.:

— Կանոն չորրորդ Կիրակէի աղուհացից՝ օրհն., հրց., մծ., ող., տր.:

— Կանոն քառասնից մանկանց՝ օրհն., «Այսօր զանյաղթելի», ճաշո:

— Կանոն հինգերորդ Կիրակէի աղուհացից՝ օրհն., հրց., մծ., ող., տր.:

— Կանոն սրբոյն Գրիգորի Բ Լուսաւորչին՝ հրց., ող., տր., մնկ.:

— Կանոն վեցերորդ Կիրակէի աղուհացից՝ օրհն., հրց., մծ., ող., տր.:

— Կանոն Ծաղկազարդի Կիրակէի Գալստեան Տեառն լերուսաղէմ՝ հրց.:

— Կանոն մեծի Երկուշաբթիին՝ օրհն.:

— Կանոն մեծի Երեքշաբթիին՝ օրհն.:

— Կանոն մեծի Չորեքշաբթիին՝ օրհն.:

— Կանոն մեծի Որբաթիին՝ օրհն., «Այսօր ի կատարումն»:

— Կանոն մեծի Ծաբաթու թաղման Տեառն՝ օրհն., «Կենդանին յախտեցից», «Կուսածին մարմնով»:

— Ծաշու գովեսչք Յինանց՝ «Յարեաւ Քրիստոս», «Կամալ յանձն առեր»:

— Կանոն Պենտէկոստէին երկրորդ ատուրն՝ օրհն., հրց., ող., տր.:

— Կանոն երրորդ ատուրն՝ օրհն., հրց., ող., տր.:

— Կանոն չորրորդ ատուրն՝ օրհն., հրց., ող., տր.:

— Կանոն հինգերորդ ատուրն՝ օրհն., հրց., ող., տր.:

— Կանոն վեցերորդ ատուրն՝ օրհն., հրց., ող., տր.:

— Կանոն եօթներորդ ատուրն՝ օրհն., հրց., ող., տր., հմբ.:

— Կանոն ծննդեան Յովհաննո Մկրտչի՝ հրց., ող., տր., մնկ., ճշ.:

<sup>20</sup> Անդ, էջ 41:

<sup>21</sup> Անդ, էջ 43, 54:

<sup>22</sup> Անդ, էջ 59:



— Շարական սրբոյն Իսահակայ հայոց հայրապետի՝ մնկ.:

— Կանոն Բ ատուր Վարդավառի՝ օրն., հրց., ող., տր., մնկ.:

— Կանոն Գ ատուր Վարդավառի՝ օրն., հրց., ող., տր., մնկ.:

— Կանոն Բ ատուր Աստուածածնի՝ օրն., հրց., մծ., ող., տր.:

— Կանոն Գ ատուր Աստուածածնի՝ օրն., հրց., մծ., ող., տր.:

— Կանոն վերացման սրբոյ Խաչին Է ատուրն՝ հրց.:

— Կանոն Վարագայ Խաչին՝ հրց., մծ.:

— Կանոն սրբոց մարգարէից՝ օրն., հրց. ող., տր., մնկ.:

— Կանոն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի՝ օրն., հրց., ող., տր., մնկ., Է2.:

— Կանոն մանկանցն Բեթղէմի՝ հրց., ող., տր., մնկ.:

— Կանոն հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի՝ օրն., հրց., ող., տր., մնկ., Է2.:

— Կանոն սրբոց Հայրապետացն՝ օրն., հրց., ող., տր., Է2.:

— Շարական Իգնատիոսի հայրապետին՝ մնկ.:

— Շարական Յովհաննոս Բակեբերանի՝ մնկ.:

— Շարական Բարսղի հայրապետին՝ մնկ.:

— Շարական Գրիգորի Աստուածաբանին՝ մնկ.:

— Շարական սրբոյն Եփրեմի՝ մնկ.:

— Շարական սրբոց Եստոնատիոսեանց՝ մնկ.:

— Շարական երկուց բիրոցն՝ մնկ.:

— Շարական սրբոյն Ստեփաննոսի Ուլնեցոյ՝ մնկ., «Յրնմայ այսօր», «Մարտիրոս և վրկայ»:

— Շարական սրբոց Վարդանանց՝ օրն.:

— Կանոն սրբոց Ղևոնդեանց՝ օրն., հրց., ող., տր., հմբ.:

— Շարական սրբոյն Սարգսի զօրավարին՝ օրն.:

— Շարական սրբոյն Գէորգեայ զօրավարին՝ օրն., մնկ.<sup>21</sup>:

Սույն հոդվածի ծրագրից դուրս է խոսել Շնորհալու շարականների կրոնական, դավանաբանական, գաղափարական բովանդակության, արվեստի, նորարարության, տաղաչափության, արտահայտչական միջոցների, լեզվի, կառուցվածքի, ազդեցության և այլ հատկանիշների մասին:

Հարկ է նշել միայն, որպես նորարարություն բովանդակության և արվեստի տեսա-

կետից Վարդանանց հերոսամարտին և քաջն Վարդանի ու նրա քաջամարտիկ զինակիցների հիշատակին ու հերոսությանը նվիրված, հայրենասիրական ու քնարական ջերմ շնչով գրած Շնորհալու «Նորահրաշ պատկառոր» (օրհնություն) և «Արիացեալք» (մանկունք) շարականները («Զայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 431—432):

Ըստ Շնորհալու, Վարդանանց հերոսամարտով «եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան» մարտիկների «վարդագոյն արեամբ»:

Շնորհալին առաջինը սրբերի շարքն է դասել «Վասն Յիսուսի և վասն հայրենեաց» նահատակված Վարդանանց հերոսներին, գրել է նրանց պայծառ հիշատակին «նվիրված առաջին բանաստեղծությունը», և «երգել է հանգամանորեն մեծ հերոսներին, նրանց քաջությունը, անճնուրացությունն ու հայրենասիրությունը»<sup>24</sup>:

«Յամենայնի հանճարեղ» Ներսեսի «քաղցրը եղանակաւ» և «խոսրովային ոճով» հորինած շարականների, տաղերի, մեղեդիների և երգերի շարքում «Նորահրաշ»-ն իր արժանավոր տեղն ունի:

Այս երգն իր շատ կողմերով սերտորեն կապված է նաև հայկական բուն ժողովրդական երաժշտությանը, մասնավորապես անդրադարձնում է ժողովրդական մեղեդիների կոմպոզիցիայի կարևոր հատկանիշները: Այստեղ խոսքի ամեն մի բառն արտասանվում է, հնչում, տեղն է հասցվում, գեղարվեստական ամբողջությունը ստեղծելու մեջ խոսքն ու եղանակը հավասարազոր նշանակություն ունեն»<sup>25</sup>:

Վարդանանց հերոսամարտին նվիրված Շնորհալու «Նորահրաշ պատկառոր» և «Արիացեալք» շարականների «եղանակները որքան ճշգրիտ են հասել մեզ հին դարերից, լրիվ պատասխան տալն առայժմ դժվար է»: «...մեզանից 100 տարի առաջ Ն. Թաշճյանի կողմից վերածայնագրված վիճակում էլ «Նորահրաշ» երգը ներկայանում է որպես միջնադարյան հայ մոնոդիկ երաժշտության բարձրարժեք կտորներից մեկը:

«Նորահրաշ»-ը գրավել է Կոմիտասի, Մ. Եկմալյանի... մասնավոր ուշադրությունը, որոնք ներդաշնակել են այն...:

...Կարծում ենք՝ սխալ չի լինի ասել, որ երկու խմբերգն էլ բավականաչափ հուզա-

<sup>24</sup> Գր. Հակոբյան, էջ 123—124:

<sup>25</sup> «Վարդանանց Նորահրաշ»-ը Եկմալյանի և Կոմիտասի մշակմամբ, Ռ. Ա. Աթայան, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4 (50), էջ 87—110:



կան են և գեղեցիկ, բայց եթե Եկմալյանի մշակումն ունկնդրելիս նրանում, ներքին ողջ հուզականությամբ հանդերձ, զգացվում է ինքնամփոփվելու մի ձգտում, թերևս ընկալվում է նահատակված հերոսի համար սրտաբուխ աղոթքի մի պահ, ապա Կոմիտասի մշակումն ունկնդրելիս զգացվում է ներքուստ փոթորկվող և պոթեկալու պատրաստ բողոքի մի պահ: Եկմալյանի մշակման մեջ աչքի է զարնում քնարականությունը, Կոմիտասի մշակման մեջ՝ սովելի շատ վիպական հերոսականությունը<sup>26</sup>:

Ընդհանրապես գրել է նաև Ղևոնդյան քահանայից նահատակությունն ու արիությունը ոգեկոչող շարականներ, որոնք ըստ էության և բովանդակության Վարդանանց նըվիրված շարականների անբաժանելի մասերն են հանդիսանում<sup>27</sup>:

Շարականների այս կանոններից դուրս Ընդհանրապես ունի նաև բազում պաշտամունքային երգեր մեր ժամագրքերում:

Մայր Աթոռում լույս տեսած «Չայնագրեալ ժամագիրք»-ում («Երգք ձայնագրեալք ի ժամու գրոց», Վաղարշապատ, 1877) Ընդհանրապես գրչին են պատկանում գիշերային ժամի «Յիշեցուք»-ը, «Չարթիք»-ը, «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը, առավոտյան ժամի «Նորաստեղծեալ»-ը, «Արարչական»-ը (ըստ շաբաթվա 6 օրերի), արևագալի ժամի երգերը՝ «Յարևելից մինչև ի մուտս», «Ծգնաւորք Աստուծոյ», «Լոյս, արարիչ լուսոյ», «Անեղանելիդ Աստուած», «Ծանապարհ և ճշմարտութիւն», «Ծաշու» կամ երրորդ ժամի «Օրհնեմք զքեզ»-ը, «Խաւարեցաւ»-ը, «Չարշարակցեալ»-ը, «Նահապետին Արքահամու»-ն, խաղաղականի ժամի «Նայեաց սիրով»-ը, «Ի բէն հայցեմք»-ը, և հանգստյան ժամի մեծ աղոթքը՝ «Հաւատով խոստովանիմ»-ը:

«Չայնագրեալ ժամագիրք»-ում Ընդհանրապես գրչին է պատկանում նաև Հիսուսի չարշարանաց նվիրված մեծ քերթվածը՝ «Այսօր աննառ»-ը, իր պատկերներով, ննջեցելոց՝ «Աստուած անեղ»-ը, և «Արարիչ և մարդասեր»-ը:

Սույն հոգևոր երգերի «հեղինակային պատկանելիության հարցն ընդհանրապես այնքան հստակ ու անվիճելի է»<sup>28</sup>:

Ընդհանրապես ժամագիրք-ում տեղ գտած վերոհիշյալ երգերից շատերը, որոնք անկասկած գրվել են կրոնական մեծ ներշնչումով, հետապնդել են ուսուցողական-ման-

կավարժական, հայրենասիրական նկատառումներ, որպես «արտապաշտամունքային» երգեր և հետո միայն աստիճանաբար մուտք են գործել եկեղեցու պաշտոններգության մեջ: Օրինակ՝ «Յիշեցուք»-ն ու «Չարթիք»-ը Ընդհանրապես գրել է Հոռմկլայի բերդապահ զինվորների համար և ինքն անձամբ այդ հոգևոր երգերը սովորեցրել է նրանց, որպեսզի հայ բերդակալներն օտար, «վայրապար» երգերի փոխարեն հայկական երգեր երգեն. «Ձի ալալիսի էին կամք սրբոյն, զի թէ հնար իցէ՝ ոչ որ խօսեցի ի խօսս աշխարհական, բայց ի գրոց, ոչ ի գինարբուս և ոչ լալլ ուրախութիւն: Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ որ գբերդն պահէին, զի փոխանակ վայրապար ձայնիցն, զա՛յն ասասցեն, որոյ սկիզբն է Սաղմոս Դարթի՝ «Յիշեցի ի գիշերի զանուն քո, Տէր», և ալալէս խորհրդաբար ըստ կարգի «Չարթիք փառք իմ», որ այժմ ասի լեկեղեցին ի ժամ գիշերային պաշտաման»<sup>29</sup>:

Կարծվում է նաև, որ «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը իրենց մի բանի եղանակավորումներով արտապաշտամունքային հոգևոր-քարոզական, դաստիարակչական ու հայրենասիրական կարգի նպատակներ են հետապնդել և ապա մտել մեր եկեղեցական ժամապաշտության մեջ, որովհետև սույն հոգևոր երգերին հանդիպում ենք մեր պաշտամունքային ձեռագիր զրքերում՝ շարակնոցներում, ժամագրքերում, տաղարաններում, ԺԵ դարից միայն:

Ընդհանրապես ինքը առաջինն է եղել նաև իր հոգևոր բազմապիսի ստեղծագործությունների կատարողը: Նա եղել է որքան մեծ բանաստեղծ-քերթող, նույնքան անվանի՝ որպես երաժիշտ: Ընդհանրապես ունեցել է «քաղցր ու անուշ ձայն», որպես «երգեցող», «երգասաց»: Նա ոչ միայն «քաղցր եղանակաւ» և «խոսքովային ոճով» գրած ստեղծագործություններով զարդարել է մեր քնարերգությունը, այլ նաև ննջեցրել է այդ երգերը «քաղցր ձայնի» և դրանք սովորեցրել՝ «մանկանց եկեղեցոյ»:

«Անթի են բանք զոր նա խօսէր,  
Եւ անդանդաղ՝ մատամբ գրէր,  
Յօժարական կամօք երգեր,  
Եւ աննախանձ ուսուցանէր,  
Որ երաժիշտ սուրբ Հոգւոյն էր...»<sup>30</sup>:

«Բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Ընդհանրապես քաջ տեղյակ է եղել հայ մասնագիտացված երգաստեղծության նախընթաց ողջ պատմությանը և, ինչպես բա-

<sup>26</sup> Անդ, էջ 99:

<sup>27</sup> «Չայնաքաղ շարական», Վաղարշապատ, 1888, «Կանոն սրբոց Ղևոնդեանց», էջ 433—438:

<sup>28</sup> Նիկ. Թաֆնդյան, էջ 63:

<sup>29</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 120:

<sup>30</sup> Ներսես Լամբրոնացի, էջ 478:



ցահայտում է հետազոտությունը, իր շարականների մի զգալի մասը հորինել է վաղ ավատատիրության շրջանի շարականագրության ավանդույթներից ամենակենսունակների ստեղծագործական յուրացման հիման վրա<sup>31</sup>, և Սահակից սկսած մինչև իր օրերը:

Ս. պատարագի երգերի բնագրերը և երաժշտական ձևավորումը նույնպես ժամանակի ընթացքում ենթարկվել են որոշ փոփոխությունների:

Եթե մեր ս. պատարագի գրական բնագիրը հին է և հիմնված տիեզերական եկեղեցու նշանավոր հայրերի հեղինակության վրա, ապա նրա երաժշտական ձևավորումը սերտորեն կապված է մեր ազգային երգարվեստի ավանդությունների հետ:

Այս հարցում էլ պատմական դեր է կատարել Ծնորհալին. «Եւ հոգևոր երգովք և քաղցրանուագ եղանակօք վայելչացուցանէր զսուրբ պատարագին խորհրդական երգսն. որպէսզի թանձրագոյն միտք տեսնողացն զսուրբ խորհուրդն, նայելով յայնպիսի պայծառագոյն սպասարորթին և սարսափելի խորհրդածութիւն, կակղացեալ անօտրասցին զգալի տեսութեամբն և յիմանալի դիտարորթին հասեալ օգտեսցին...: Երգէր և երգս տաղից քաղցրանուագ եղանակօք՝ յիմաստս բանի դաշնակեալ ի տօնս տէրունիս և յիշատակս առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց»<sup>32</sup>:

Այս «քաղցրանուագ» եղանակներով Ծնորհալին յորովի հնչեցրել է ս. պատարագի վաղուց ընդունված բնագրի էական մասերը: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Ծնորհալին «արար զքարոզ սրբոյ պատարագին քաղցր եղանակաւ և տունս շարականաց նմին խորհրդաբար»<sup>33</sup>:

Ծնորհալու երաժշտական տաղանդի արդյունք են համարվում ս. պատարագում սարկավագի քարոզը՝ «Եւ ևս խաղաղութեան... ամենայն սրբովք զորս յիշատակեցաք», «Մի որ յերեսայից», «Սաղմոս ասացէք», «Ողջոյն տուք միմեանց», «Ահի կացուր», «Ջորունս գորունս» և այլն:

«Չայնագրեալ պատարագ»-ում սարկավագի քարոզների եղանակները (իսկ որոշ դեպքերում՝ գուցե և խոսքերի վերախմբագրումը) պատկանում են Ծնորհալուն<sup>34</sup>:

Ուսումնասիրությունները «ցույց են տալիս, որ նույնիսկ ամբողջական եղանակների հոսքը Ծարակնոցից դեպի պատարագ,

մասնակի կամ պատահական երևույթ չէ, և որ Ծնորհալու շարականներից նաև ուրիշ եղանակներ անցել են պատարագի երգերին»: Դրանցից են «Լցաք ի բարությունց քոց Տէր»-ը, «Հայր երկնաոր», «Որդի Աստուծոյ», «Հոգի Աստուծոյ», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեսաւ»-ը, և պատարագի բոլոր սրբաանցությունները, «Բարեխօսութեամբ», «Յաչս հարկ»-ը և այլն<sup>35</sup>:

Նույնքան մեծ կարևորություն են ներկայացնում Ծնորհալու այլ հոգևոր երգերը, այն է՝ տաղերը, մեղեդիները, զանգերը, որոնք «հորինված են խիստ բազմազան չափերով» և «որոնցով նա խիստ ճիսացրել է հայոց եկեղեցու ժամերգությունը: Դրանց մեջ կան և շատ գեղեցիկները և այնպիսիները, որ մի ժամանակ սիրված և ժողովրդականացած են եղել»<sup>36</sup>:

Հարկ է հիշել այստեղ Ծնորհալու գրչին պատկանող հետևյալ տաղերը՝ «Աւետեաց», «Մրագալոյցի Ծննդեան», «Ի Ծնունդն Տեառն», «Ի մկրտութիւն Տեառն», «Ի յարութիւնն Ղազարոս», «Ծաղկազարդին», «Մեծ ուրբաթին», «Ի խաչելութիւն Տեառն», «Ի յարութիւն Տեառն», «Ի ս. Երրորդութիւնն», «Վարդավառին», «Ի փոխումն կուսին», «Խաչի», «Հրեշտակացն և ամենայն երկնային զօրացն», «Ի ս. Առաքեալսն», «Ի ս. Մարգարէսն» և այլն:

Գեղեցիկ են ու հայրենասիրական շնչով գրված այն տաղերը, որոնք նվիրված են մեր եկեղեցական և աշխարհական վաստակաշատ գործիչներին, ինչպիսիք են ս. Լուսավորիչը, Ներսես Պարթևը, Տրդատ թագավորը և այլն:

«Ծառ թարմ և ուժեղ են հնչում նրա մի բանի տաղերը, ինչպես, օրինակ, Հոնիսիսիմյան կույսերի համար երգածները»<sup>37</sup>:

Ծնորհալին հաճախ է անդրադարձել իր տաղերում ս. Հոնիսիսիմյանց կույսերի թեմային: Այս առթիվ նա գրել է մի շարք տաղեր՝ «Ի սուրբ Հոնիսիսիմեանսն», «Ի կոյսն Հոնիսիմե» և այլն:

Ս. կույսերին նվիրված տաղերում Ծնորհալին իր բանաստեղծության նյութը վերցրել է Ագաթանգեղոսից, «բայց քերթողը սեփական երևակայությամբ նորոգած է այն: Մի բանի բառերով ու կարճ խոսքերով կատարված է Հոնիսիսիմեի գովքն ու գեղեցկության նկարագրությունը արագ ու եռանդուն և դիմիկ տողերով: Բանաստեղծը գիտե ողդակի խոսքերով և դիմումներով աշխուժացնել պատմվածքի ընթացքը: Նա այս

<sup>31</sup> Նիկ. Թառնիզյան, էջ 78:

<sup>32</sup> «Սուրբ Բայկականք», ԺԴ, էջ 37—38:

<sup>33</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 119:

<sup>34</sup> Նիկ. Թառնիզյան, էջ 57:

<sup>35</sup> Աճ, էջ 6, 57—61:

<sup>36</sup> Մ. Աբեղյան, երկեր, Դ հտր., Երևան, 1970, էջ 111:

<sup>37</sup> Աճ, էջ 112:



հին գրական տեսակը կատարելության է հասցրել»<sup>38</sup>։ Օրինակ.

«Երջանիկ հոգիահրաշ,  
Կոյսըն մաքուր սուրբ Հոփսիսիմէ...  
Կուսական փողըն գոչեր,  
Տայր անտիս սուրբ Գրիգորի.  
«Փութա, ե՛լ ի վիրապէդ  
Լուսաորիչ Հայաստանի»:

«Ծովային շուշան ծաղիկ,  
Բուսեալ ի տանըս Թորգոմի,  
Ի վայելուչ գեղ պատկերին,  
Յիմարեցան ազգն հային.  
Պետք և իշխանք առ հաւարակ  
Եկին ի դուռն հնձանին:  
Սիրասնունդ սիրամարգ սխրալի,  
Նրբափայլ ոսկերիչ տարփալի,  
Եռապսակ իղազլուխ ցանկալի,  
Հրեշտա՛կ, հրաշագե՛ղ Հոփսիսիմէ»<sup>39</sup>:

Ընդհանուր աչա տաղերի մասին տես Ներսես Ընդհանուրի, «Բանք չափա», 1929, Վենետիկ, էջ 397—518:

Ընդհանուրի ունի նաև անտիպ այլ ընտիր տաղեր և զանգեր<sup>40</sup>:

Ընդհանուրի որպես բարեկարգիչ մեծ աշխատանք է կատարել նաև մեր եկեղեցական տոնացույցի և Մաշտոցի կարգավորման և հարստացման գործում:

Ընդհանուրի է վերագրվում մեր եկեղեցական տոնացույցի մեջ «հինչ ինչ նորություններու» ներմուծումը, «հինչպես Հոգեգալուստը յոթնորեքի և Վերափոխումը իննորեքի վերածելը»<sup>41</sup>:

Ընդհանուրի են պատկանում նաև Համբարձումից մինչև Հոգեգալուստ պահք պահելու, Վարդավաթի, Հոգեգալուստյան և վերափոխման տոները երեքօրյա և բազմօրյա դարձնելու հրահանգը, «Յայս վեց օրս՝ սուրբն Ներսէս Ընդհանուրի կարգեաց տօնել զտօն Հոգւոյն սրբոյ գալստեանն և զարդարեաց երգօք և ընթերցուածովք»<sup>42</sup>:

1173 թվականի օգոստոսի 13-ին Հռոմ-կրլայում, հինգշաբթի օրը, ծանրորեն տկարացած վերջին ջերմախտից, վախճանվում էր ս. Ներսես Ընդհանուրի, 72 տարեկան

հասակում, և թաղվում իր եղբոր՝ Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսի կողքին:

Ընդհանուր մահով հայ եկեղեցին և մեր մատենագրությունը մեծ կորուստ էին կրում: Լամբրոնացին այս տխուր առիթով գրում է.

«Բայց արդ ողորց՝ ինձ ժամանեալ,  
Զընթացս բանին՝ աստէն կալեալ,  
Կական ասէ՝ ձայնի բառնալ...  
Ճարտարապետն վախճանեալ,  
Եւ ամենին խափան եղեալ:  
Յետոյ վերջին կետըն հասեալ,  
Վերափոխման հրաւեր եղեալ,  
Զուարթ հոգին անշէջ կացեալ,  
Նաև զաշխարհս յայնժամ օրհնեալ,  
Զխաղաղութիւն վերջին շնորհեալ,  
Քաղցր բարբառ առ մեզ ձայնեալ,  
Ես օրհնօք՝ եմ ընթացեալ,  
Եւ ի պսակըն տենչացեալ:  
Ապա գիտցին սուրբ աւանդեալ,  
Յերկնից խորանըն վերացեալ:  
**Պատուեմք զգուրք այս դամբարան**  
**Փառազարդեալ երկնանքման:**  
Ուրախացի՛ր պետող վարժման  
Ծածուկ և նուրբ գրոց լուծման,  
**Թողեր յերկրի գրով արձան»**<sup>43</sup>:

«Ներսես Ընդհանուրի այն սակավաթիվ երանելիներեն մեկն է, որոնք այժմ տոնելի են հայ եկեղեցվո մեջ և հինգերորդ դարում մեջ փակված տոնացույցին վրա ավելցած են»<sup>44</sup>:

Ընդհանուր մահը մեծ վիշտ է պատճառում նաև հույներին և կալսրին. «Վշտանայր բարեպաշտ արքայն և հառաչանօք ասէր. մեծ զգայարան և արթուն բարձաւայսօր յեկեղեցւոյ Աստուծոյ, զրկեցան Հայաստանեայք յերկրորդ Լուսաորչէն իրեանց...»:

Կայսրը հրահանգում է Ընդհանուրի հիշատակը սուրբ պահել. «Մեք զարժանի իշատակի անուն քո ընդ առաջին սրբոցն դասակարգեմք տօնախմբելով ուրախութեամբ ի Քրիստոս, և պատուէր հրամանի ետ ի թագաւորական քաղաքին եկեղեցիսն՝ յիշատակել զնա ընդ առաջին սուրբսն տօնախմբութեամբ»<sup>45</sup>:

«Քանզի այրն իմաստուն ո՛չ եթէ խոհական բանին և գիտութեանն պատմութեամբ հիացուցանէր զնոսա, այլ առաւել ի սքանչելի վարուցն պատմութիւն... զհեզահալեցողութիւն հոգւոյ և զպարկեշտութիւն անձինն և զնզնաւորական կրօնսն...»:

<sup>38</sup> Անդ, էջ 112:

<sup>39</sup> Ներսես Ընդհանուրի, «Բանք չափա», Վենետիկ, 1929, էջ 397—518:

<sup>40</sup> Արսեն վրդ. Բերբերյան, «Ա. Ներսես Ընդհանուր անտիպ տաղերը», «Էջմիածին», 1967, № 7, էջ 28—30:

<sup>41</sup> «Ազգապատում», էջ 1439:

<sup>42</sup> «Մաշտոց գիրք Հայց. եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1872, էջ 474, 601:

<sup>43</sup> Ներսես Լամբրոնացի, էջ 486—497:

<sup>44</sup> «Ազգապատում», էջ 1444:

<sup>45</sup> «Թողը ընդհանրական», էջ 228:



Հույներին Շնորհալին «հիացուցանելը քանչեղի վարութեան», իր անձին «պարկեշտութեամբն և ճգնատրական կենցաղով»: Շնորհալին եղել է «ի հարցմունս խոնարհամիտ, ի պատասխանիս հանդարտ, խաղաղութիւնն խնդրող, և զսիրով օրէնսն հաստատող»:

«Ներսէս Շնորհալին հայոց ամենափառալոր հայրապետներից մեկն է. նա առաջինը հաստատ և որոշ ձև տվեց հայոց դավանության, հայոց ծիսակատարություններին»<sup>46</sup>:

«Ներսէս Շնորհալին իբրև գրող պարծանքն է Արծաթի դարուն: Նա ո՛չ միայն հոյակապ աստվածաբան մըն էր, այլ նաև ընտիր բանաստեղծ: Իր թողած հոգևոր գրականությունը մշտակենդան և անմաշելի

հարստություն մըն է մեր եկեղեցիին համար»<sup>47</sup>:

Շնորհալու կյանքի և գործունեության միակնիքն ասլն հոգվածաշարքը ավարտում ենք՝ Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ Վեհափառ Հայրապետի՝ 1973 թվականի հունվար 16 թվակիր սրբատառ կոնդակի հետևյալ ճիշտ ու բարձր գնահատությունը:

«Առանց Ներսէս Շնորհալու լուսաշող ներկայության, պիտի մերկանար կիլիկյան ԺԲ դարը իր փառքից և պիտի անէանար մի անկրկնելի, շողարձակ բարձունք մեր մշակույթի պատմության հորիզոնից: Երանաշնորհ ս. Շնորհալին փառավորվել է անցյալում և փառավորվելու է միշտ, իբրև բոլոր ժամանակների պարծանք ամենայն հայոց»<sup>48</sup>:

<sup>47</sup> Նորայր Եպս. Պողարյան, «Հայ գրողներ, Ե—ԺԷ դար», Երուսաղեմ, 1971, էջ 234:

<sup>48</sup> «Էջմիածին» ամսագիր, 1973, հունվար, էջ 4:

<sup>46</sup> «Հայոց եկեղեցական իրավունք», Ա գիրք, Եռշի, 1903, էջ 558, 571:

